# Արձանագրություն N 4

## «ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ–26/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «08» «01» 2026թ.

ժ 12-00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Հ. Ղազարյան

Հանձնաժողովի անդամ Ա. Սարգսյան

Հանձնաժողովի անդամ Լ. Ջիլավյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Մաշկովսկայա

**1.1 Ընդունել ի գիտություն որ.**

Համաձայն հանձնաժողովի 09.12.2025թ.-ի N 3 արձանագրության՝ «ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ–26/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից էր ճանաչվել «ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ն:

**1.2 Ընտրված մասնակցի կողմից պայմանագրի կնքումից հրաժարվելու մասին**

(Հ. Ղազարյան)

«ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ–ին 25.12.2025թ.-ին «ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով պատշաճ կերպով ծանուցվել է պահնորդական ծառայություններ մատուցելու ձեռքբերման պայմանագրի նախագիծը:

- «ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից պարտավոր էր, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ստորագրված պայմանագիրը՝ վավերացնելու նպատակով: Պայմանագրի ստորագրման վերջնաժամկետը սահմանված էր 07.01.2026թ.-ը, սակայն պայմանագիրը չի ներկայացվել մասնակցի կողմից:

**Հանձնաժողովը որոշեց.**

- 08.01.2026թ.-ի դրությամբ «ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է վերը նշված օրենքի կետը, ինչի արդյունքում կազմակերպության նկատմամբ կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 32-րդ կետի 29-րդ ենթակետի «ա» պարբերությունը, կազմակերպության տվյալները չեն ուղարկվի լիազորված մարմնին՝ գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու նպատակով:
- Հայտի ապահովում չվճարելու դեպքում
  Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման */ներկայացնելու ժամկետը՝ 526-Ն որոշման 32-րդ կետի 29-րդ ենթակետ-ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող փասներորդ օրը:/* վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
- «ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ–26/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի. Ստորագրություն

Նախագահ՝ Հ. Ղազարյան

Անդամներ՝ Ա. Սարգսյան

Լ. Ջիլավյան

Քարտուղար՝ Վ. Մաշկովսկայա